

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 7

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

05 ապրիլի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝

- Մագիստրոսական թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ՝ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյան
- Ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ՝ ք.գ.թ. Ս. Պետրոսյան

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Պետրոսյանի կողմից ներկայացված «Ջրային գոլորշիներով թորման եղանակով անջատվող նյութերի խումբ» ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

- Զեկուցող՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հ. Միմոնյան

3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական թեզերը և ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահներ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանին և ք.գ.թ. Ս. Պետրոսյանին, ովքեր գիտխորհրդի անդամներին ներկայացրեցին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածների նախագծերը: Նրանք նշեցին, որ հավելվածները կազմվել են՝ հիմք ընդունելով ԵՊՀ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգ» փաստաթղթերը: Նրանք տեղեկացրեցին նաև, որ հավելվածները կազմելիս առաջնորդվել են «Դեղագիտություն» և «Ֆարմացիա» մասնագիտությունների առանձնահատկություններով: Ռ. Հովհաննեսյանը և Ս. Պետրոսյանը հավելեցին, որ հավելվածների նախագծերը քննարկվել են ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ միջամբիոնային նիստերում և ստացել դրական արձագանք:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, ովքեր նշեցին, որ վերոնշյալ փաստաթղթերում կատարված լրացումներն անհրաժեշտ են հատկապես Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների բովանդակությունն առավել հստակ և մանրակրկիտ ներկայացնելու համար: Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածների նախագծերը և դրանց ձևակերպման ժամանակ առաջնորդվել դրանցում ներկայացված դրույթներով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել մագիստրոսական թեզերի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածների նախագծերը:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Պետրոսյանի կողմից ներկայացված «Ջրային գոլորշիներով թորման եղանակով անջատվող նյութերի խումբ» ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի անդամ, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հ. Միմոնյանին, ով ներկայացրեց նույն ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Պետրոսյանի հեղինակությամբ մեթոդական ձեռնարկը: Նա նշեց, որ ձեռնարկը քննարկվել է ամբիոնում (նիստ №5, առ 26. 03. 2019թ., քաղվածքը կցվում է) և մեթոդական խորհրդի նիստում (նիստ №6, առ 02. 04. 2019թ., քաղվածքը կցվում է): Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի դոցենտ ք.գ.թ., Կ. Պետրոսյանը: Գրախոս Կ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ Ս. Պետրոսյանի ձեռնարկը նվիրված է այն նյութերի քիմիոնաբանական նկարագրությանը և հայտնաբերման մեթոդներին, որոնք կարելի է հետազոտվող նմուշներից անջատել ջրային գոլորշիներով թորման եղանակով: Նա նշեց, որ ձեռնարկը կազմված է թունաբանական քիմիա առարկայի ուսումնական ծրագրին համապատասխան, շարադրված է մատչելի լեզվով, ներառված են թունաբանական քիմիայում կիրառվող ժամանակակից մեթոդները: Կ. Պետրոսյանը նշեց նաև, որ ձեռնարկում նկատվել են որոշ բացթողումներ, առկա են տերմինների ոչ ճիշտ ձևակերպումներ, որոնք շտկելուց հետո, կարելի է ձեռնարկն ուղարկել արտաքին գրախոսության:

Ելույթ ունեցավ՝ գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, ով նշեց, որ ուսումնամեթոդական ձեռնարկի վերնագիրն ամբողջությամբ չի արտացոլում վերջինիս բովանդակությունը և թունաբանական քիմիայի հետ կապը, քանի որ ջրային գոլորշիներով թորման եղանակով կարող են ստացվել մի շարք նյութեր, որոնք առանձնակի կարևորություն չունեն թունաբանական քիմիայի համար: Նա առաջարկեց փոխել ձեռնարկի վերնագիրը և նոր միայն ուղարկել արտաքին գրախոսության: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր կարևորելով ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը, միաժամանակ նշեցին, որ աշխատանքի բովանդակությունը և թունաբանական քիմիա առարկայի համար ունեցած նշանակությունն ընդգծելու համար անհրաժեշտ է փոխել վերնագիրը: Ելույթ

ունեցողները և ներքին գրախոս Կ. Պետրոսյանն առաջարկեցին ձեռնարկն անվանել հետևյալ կերպ՝ «Ջրային գոլորշիներով թորման եղանակով անջատվող նյութերի քիմիոնաբանական բնութագրեր» և նոր վերնագրով այն ուղարկել արտաքին արտաքին գրախոսման Երևանի պետական բժշկական համալսարան:

Որոշեցին՝ (միաձայն) Ս.Ղ. Պետրոսյանի հեղինակությամբ ուսումնական ձեռնարկը արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան